Թողարկում N2, 2018

ՀԱՅԱՍՏԱՆ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ» ԳՈՒԼ

ՍԵՐԳԵՅ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

Թողարկում N2, 2018

ՀԱՅԱՍՏԱՆ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ» ԳՈՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ՍԵՐԳԵՅ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

«Հայաստան. Ֆինանսական ներգրավվածություն» վերլուծականը էլեկտրոնային պարբերական է, որի նպատակն է վերլուծել և հանրությանն ամփոփ կերպով ներկայացնել Հայաստանի ֆինանսական ներգրավվածության բաղադրիչների փոփոխությունները:

Պարբերականը հրապարակվում է ՀՊՏՀ «Ֆինանսական ներգրավվածություն» գիտաուսումնական խմբի կողմից: Արտահայտված տեսակետները և եզրահանգումները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել ՀՊՏՀ պաշտոնական տեսակետի հետ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ 2017-ԻՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

- Ֆինանսական ներգրավվածության աստիճանի բարձրացումը կախված է ֆինանսական ծառայությունների մատչելիությունից, հատկապես ավանդների և վարկերի նկատմամբ ձևավորված տոկոսադրույքների մակարդակներից:
- 2017թ-ի դեկտեմբերին մինչև մեկ տարի տևողությամբ ներգրաված ավանդների տոկոսադրույքները 2016թ-ի դեկտեմբերի համեմատությամբ հիմնականում նվազել են (աղյուսակ 1): Բացառություն է կազմում ՀՀ դրամով իրավաբանական անձանցից ներգրավման դրույքաչափը. նախորդ տարվա 7,4-ի դիմաց հաշվետու տարվա վերջին կազմել է 8,1 տոկոս:
- 2017թ-ի դեկտեմբերին մինչև մեկ տարի տևողությամբ տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2016թ-ի դեկտեմբերի համեմատությամբ նվազել են (աղյուսակ 1):
- ՀՀ բանկային համակարգի կողմից ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքների նվազման պատճառների բացահայտումը պահանջում է համալիր վերլուծություն:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. *ՀՀ ֆինանսական շուկայում ներգրավման և տեղաբաշման տոկոսադրույքները*[1]

Ցուցանիշներ	2016թ. դեկտեմբեր	2017թ. հոկտեմբեր	2017թ. նոյեմբեր	2017թ. դեկտեմբեր
Ավանդներ՝ մինչև 1 տարի ժամկետով				
Իրավաբանական անձանց				
ՀՀ դրամով	7,4	8,7	8,5	8,1
ԱՄՆ դոլարով	6,0	4,2	2,0	2,8
Ֆիզիկական անձանց				
ՀՀ դրամով	11,4	8,8	8,6	8,6
ԱՄՆ դոլարով	4,7	3,8	3,4	3,3
Վարկեր՝ մինչև 1 տարի ժամկետով				
Իրավաբանական անձանց				
ՀՀ դրամով	12,3	11,4	11,4	11,1
ԱՄՆ դոլարով	7,8	6,7	7,4	7,2
Ֆիզիկական անձանց				
ՀՀ դրամով	19,4	15,6	16,4	16,0
ԱՄՆ դոլարով	14,4	11,6	11,3	11,2

[1] Տես՝ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2016, դեկտեմբեր, էջ 56: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2017, դեկտեմբեր, էջ 66:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

- 2017թ-ի դեկտեմբերի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ ավելացել են: Իրավաբանական անձանց դրամով տրված վարկերն ավելացել են 31,6, իսկ ֆիզիկական անձանց տրված վարկերը 45,8 տոկոսով (աղյուսակ 1):
- 2017թ-ի դեկտեմբերի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ ավելացել են: Իրավաբանական անձանցից դրամով ներգրավված ավանդներն ավելացել են 38,9, ԱՄՆ դոլարով՝ 33,9, իսկ ֆիզիկական անձանցից համապատասխանաբար՝ 59,2 և 38,5 տոկոսով:
- Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ տրամադրված վարկերը գերազանցում են ներգրավման ծավալները, ինչը նշանակում է, որ վարկավորումն իրականացվում է ներգրավման այլ աղբյուրների հաշվին: Այս և բանկային գործունեության մյուս կողմերի շուրջ լաբորատորիայում իրականացվում է հետազոտություն «Բանկային տոկոս: Գործոններ: Նվազման հեռանկարներ» թեմայով:

ԱՂՅՈՒՍԱԿ 2. *ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները[2] (մլն)*

Ցուցանիշներ	2016 թ. դեկտեմբեր	2017 թ.		
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
Վարկեր իրավաբանական անձանց				
ՀՀ դրամով	46.873,9	38.258,0	50.059,3	61.680,7
ԱՄՆ դոլարով	364,6	167,3	202,6	409,2
Վարկեր ֆիզիկական անձանց				
ՀՀ դրամով	73.641,9	70.462,6	98.238,3	107.338,8
ԱՄՆ դոլարով	39,8	34,5	113,8	52,1
Ավանդներ իրավաբանական անձանց				
ՀՀ դրամով	25.403,1	18.579,6	15.305,8	35.295,1
ԱՄՆ դոլարով	52,7	69,0	19,2	78,9
Ավանդներ ֆիզիկական անձանց				
ՀՀ դրամով	39.160,5	45.790,7	59.892,2	62.359,0
ԱՄՆ դոլարով	156,5	190,9	183,1	216,8

[2] Տես՝ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2016, դեկտեմբեր, էջ 61: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2017, հոկտեմբեր, էջ 191: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2017, նոյեմբեր, էջ 73: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2017, դեկտեմբեր, էջ 71:

- «Ֆինանսական ներգրավվածության» ելակետային բաղադրիչը պաշտոնական ֆինանսական հաստատություններում վճարահաշվարկային և ֆինանսական հիմնական ծառայություններ ստացող հաճախորդներն են:
- Առևտրային բանկերի ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձ հաճախորդների քանակը մեկ տարվա ընթացքում ավելացել է (աղյուսակ 3): Ընդ որում, ֆիզիկական անձանց հաշիվները 2017 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին 2016 թ. դեկտեմբերի նկատմամբ որոշակիորեն նվազել է: Քանի որ առանձին անձը կարող է ունենալ մի քանի բանկային հաշիվներ, ուստի ֆինանսական ներգրավվածության աստիճանի գնահատումը վերաբերում է հարցումների կազմակերպմանը:
- Վարկային հաշիվների քանակը ևս ավելացել է, ինչն առավելապես տեղ է գտել ֆիզիկական անձանց վարկային հաշիվների հաշվին: Մեկ տարվա ընթացքում վերջինների հաշիվների քանակն ավելացել է 21632-ով և 2017 թ. դեկտեմբերին կազմել է 880427: Վերը նշված նկատառումը հարցումների կազմակերպման առումով ամբողջությամբ վերաբերում է նաև ավանդային և վարկային հաշիվներին:
- Աղյուսակի տվյալները ցույց են տալիս նաև, որ թեև ավելացել են ժամկետային ավանդային հաշիվները, սակայն դրանք մի քանի անգամ զիջում են վարկային հաշիվների քանակները: Նշվածը դնում է առանցքային խնդիր, ինչը վերաբերում է բանկերի ռեսուրսային բազային:

ԱՂՅՈՒՍԱԿ 3. *Հաճախորդների և նրանց բանկային հաշիվների քանակը*[3]

Ցուցանիշներ	2016 թ. դեկտեմբեր	2017 թ.		
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
Հաճախորդների քանակ	2493558	2457384	2471714	2496489
Իրավաբանական անձ	79609	80456	81730	82100
Ֆիզիկական անձ	2413949	2376928	2389984	2414389
Վարկային հաշիվների քանակ	881100	880303	881907	902898
Իրավաբանական անձ	22305	22259	22480	22471
Ֆիզիկական անձ	858795	858044	859427	880427
Ժամկետային ավանդային հաշիվների քանակ	194502	202150	203636	206608
Իրավաբանական անձ	3070	2803	2787	2813
Ֆիզիկական անձ	191432	199347	200849	203795

[3] Տես՝ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2016, դեկտեմբեր, էջ 99: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2017, դեկտեմբեր, էջ 110: